# ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (19.01.2026թ.-18.06.2026թ.), ՉՈՐՍ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԻ (23.01.2026թ., 13.02.2026թ., 07.04.2026թ., 11.05.2026թ.) ԵՎ ՄԵԿ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ (02.07.2026թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման տասնմեկերորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2026 թվականի հունվարի 19-ին և ավարտվել հունիսի 18-ին:

Գումարվել է՝

- 8 հերթական,

- 4 արտահերթ նիստեր՝ հունվարի 23-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ, փետրվարի 13-ին՝ կառավարության նախաձեռնությամբ, ապրիլի 7-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ և մայիսի 11-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 1 արտահերթ նստաշրջան՝ հուլիսի 2-ին՝ կառավարության նախաձեռնությամբ:

Ազգային ժողովն ընդունել է 413 օրենք, որից՝

- 10-ը «մայր» օրենքներ են՝ («Կլիմայի մասին», «Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին», «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին», «Տեղեկատվական

տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Անձը հաստատող փաստաթղթի մասին», «Հայաստանի Հանրապետության սնանկության օրենսգիրք», «Օդային փոխադրումներ իրականացնողների և օդանավ շահագործողների համար ուղևորների, թռիչքային և սպասարկող անձնակազմի, ուղեբեռի, բեռի և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության նվազագույն պահանջների սահմանման մասին», «Ներդրումների մասին», «Բանկերի վերակառուցման մասին» և «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2025 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»):

- 386՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,
- 17՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 362-ի հեղինակը Կառավարությունն է, 50-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորներ, 1-ինը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը:

Ընդունված օրենքներից 20-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 7-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 5-ը՝ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը, 24-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 48-ինը՝ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 125-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ը

Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման մշտական հանձնաժողովը, 76-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 76-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և 29-ինը՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

**Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝**

- **ընտրել է՝**

- Ազգային ժողովի Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Վանիկ Օհանյան)
- Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Արուսյակ Ջուլհակյան)
- Սահմանադրական դատարանի դատավոր (Վլադիմիր Վարդանյան),
- Կենտրոնական բանկի նախագահ (Մարտին Գալստյան),
- Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի նախագահ (Ներսես Երիցյան),
- Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի անդամներ (Նաիրի Ադամյան, Սրբուհի Հակոբյան, Դավիթ Խաչատրյան),
- Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ (Թադեւոս Ավետիսյան),
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ (Եփրեմ Կարապետյան):

- **որոշմամբ հաստատել է՝**

- Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

- **լսել է և ընդունել է ի գիտություն՝**

- Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2025 թվականի գործունեության եւ տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության դատախազության 2025 թվականի գործունեության մասին հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024-2025 թթ. գործունեության մասին հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի 2025 թվականի գործունեության մասին հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թվականի գործունեության մասին հաղորդում,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2025 թվականի գործունեության մասին հաղորդում,
- 2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը եւ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների

պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2025 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը,

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի գործունեության մասին հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2025 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում,
- Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի 2025 թվականի գործունեության վերաբերյալ հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի գործունեության մասին հաղորդումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2025 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց: